

25. 263/1

Խ Ս Հ Մ — Ֆ Ճ Կ

ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ  
Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ОБЯЗАТЕЛЬНЫЙ

ЭКЗЕМПЛЯР

332.2

7-96

www

# Հ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

332.2

7-96

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ  
ՊԵՏՎԱՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐԶՈՒԹՅԱՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

Այս հուշատետրի խնդիրն է— խնայողական դրամարկղներին աշխատողներին, ինչպես և հանրորդակտիվիստներին նյութ տալը խնայողական դրամարկղներին մասին աշխատավորութայն ժողովներում զեկուցումներ և զրույցներ կազմակերպելու համար:

Ընդամին հարկավոր է ինակտի առնել, վոր հուշատետրը չի կարող զեկուցումների կամ զրույցների սխեմա ծառայել: Նրա մեջ տեղավորված տվյալները զեկուցողների կողմից կարող են ողտաղործվել լրիվ կամ մասնակի, յեղներով ինչպես այն ժամանակից, վորի համար նախատեսված է զեկուցումը, կամ զրույցը, նույնպես և ունկնդիրներէ կազմից ու այլ պայմաններից:

ՊԵՏԱՇԽՆՆԱՅԻՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏ-  
ՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



3026  
40

1. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ-ում մարդկութայն պատմութայն մեջ ա-  
ռաջին անգամն է իրականացվել հիմնականում կո-  
մունիզմի առաջին ֆաղը— սոցիալիզմը: Սոցիալիզմի  
հաղթանակը վեր քաշեց մեր յերկիրը ահադին բարձ-  
րութայն:

Մինչ հեղափոխական Ռուսաստանը, չնայած բը-  
նակչութայն ահադին քանակութայն, հսկայական  
տարածութայն ու բնական անչափ հարստություննե-  
քի, տնտեսական ու տեխնիկական տեսակետից չա-  
փազանց հետամնաց յերկիր էր: 1913 թվին, մինչ  
հեղափոխական Ռուսաստանի ժողովրդական տնտեսու-  
թյան ստավեյրազույն վերելքի մոմենտին, Լենինը  
նշեց, վոր Ռուսաստանը մնում է անասելի, չտեսնը-  
ված հետամնաց յերկիր, աղքատ, կիսավայրենի,  
տարբայրված ժամանակակից արտադրութայն միջոց-  
ներով չորս անգամ վատ Սնդլիայից, հինգ անգամ  
վատ Գերմանիայից, տաս անգամ վատ Ամերիկայից:  
Ֆարական Ռուսաստանի արտադրանքը համաչխարհո-  
յին արդյունաբերութայն արտադրանքի ընդհանուր  
ծավալի չնչին մասն էր կազմում՝ ընդամենը 2,6 տո-  
կոս: Այդ ցուցանիշով Ռուսաստանը բռնում էր աչ-  
խարհում հինդերորդ տեղը, ընդվորում անչեղբրեն  
չարունակում էր հետ մնալ առաջավոր կապիտալիս-  
տական յերկրներից:

Միայն Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունն  
էր, վորը վոչնչացներով շահագործումը մարդու կող-  
մից մարդուն և արձակելով յերկրի արտադրողական  
ուժերը, բաց արեց Ռուսաստանի դարավոր հետա-  
մնացությունը վերացնելու ուղին:

Անցան ընդամենը միայն յերկու տասնամյակներ

և մեր յերկիրը դարձավ հզոր, առաջավոր պետութիւն: Փայլուն կերպով կատարելով Ստալինյան առաջին յերկու հնգամյակները, մենք արտադրութեան տեխնիկայի և արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան տեմպերի աճման բնագալստում անցանք գլխավոր կապիտալիստական յերկրներէց: Ենտրհիվ տնտեսութեան սոցիալիստական սխտեմի վիթխարի առավելութիւններին կապիտալիստականի հանդէպ, մենք ձեռք բերինք ժողովրդական տնտեսութեան զարգացման այնպիսի տեմպեր, վորոնք անհնարին են վորեմէ մի այլ յերկրում:

ԽՍՀՄ արդյունաբերական արտադրանքը 1938 թ. մինչ պատերազմի աւանարարձր մակարդակի համեմատութեամբ, վորին հասել էր կապիտալիստական Ռուսաստանը 1913 թվին, ավելացավ 9 անգամ:

Մինչդեռ գլխավոր կապիտալիստական յերկրներէ արդյունաբերութիւնը վերջին քառորդ դարում քարշ է գալիս մինչ պատերազմի մակարդակի շուրջը, գերազանցելով նրան ներկայումս վոչ ավել, քան 20-30 տոկոսով: Զարգացման բարձր տեմպերի հիման վրա ԽՍՀՄ արդյունաբերութեան արտադրանքի ծաւալով անցավ Անգլիայից, Գերմանիայից և Ճրանսիայից ու բռնեց առաջին տեղը Յեւրոպայում և յերկրորդ տեղն աշխարհում: ԽՍՀՄ բաժինը համաշխարհային արդյունաբերութեան արտադրանքի ընդհանուր ծախումում բարձրացավ մինչև 13,7 տոկոսի:

ԽՍՀՄ արդյունաբերութիւնը, ի տարբերութիւն կապիտալիստական յերկրներէ արդյունաբերութեան, չի ծանրաբեռնված հնացած, մաշված տեխնիկայով: Մեր ձեռնարկութիւնները հազեցված են նորագոյն, կատարելագործված սարքավորումով: Խորհրդային մեքենայինարարութիւնը, վորը 1913 թ. համեմատութեամբ աճել է ավելի քան 30 անգամ, հաջողութեամբ է լուծում ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի տեխնիկայես զինելու խնդիրները:

Վիթխարի վերելքի յե հասել սոցիալիստական գյուղատնտեսութիւնը: Յանքերի տարածութիւնները ԽՍՀՄ-ում մինչ պատերազմի մակարդակի համեմատութեամբ ավելացել է ավելի քան 30 տոկոսով: Զգալիորեն աճել է գյուղատնտեսութեան համախառն արտադրանքը: Յանքերի տարածութիւններով, ինչպես և այնպիսի մշակութիւնների համաքումով, վորպիսին ցորենն է, հաճարը, վարսակը, վուշը, շաքարաքաղցիկը և այլն, ԽՍՀՄ ներկայումս ամբողջ աշխարհում բռնում է առաջին տեղը: Մեր հողագործութիւնը հանդիսանում է առավելապես մեքենայացված: Մոտ հինգ հարյուր հազար տրակտորներ ավելի քան 9 միլիոն ձիու ընդհանուր ուժ ունեցող կարողութեամբ աշխատում են կոլխոզային և սովխոզային դաշտերում: Ավելի քան 150 հազար կոմբայններ համաքում են լիառատ բերքը:

Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան անշեղ աճը չէր կարող չբերել և իրոք բերեց խորհրդային ժողովուրդների նյութական գրութեան նշանակալից յաւաքմանը և կուլտուրայի աճմանը: ԽՍՀՄ-ում վերջնականապես մոլանջացված է գործադրութիւնն ու աղքատութիւնը:

Բանվորների և ծառայողների քանակը մեր յերկրում անընդհատ ավելանում է, գերազանցելով արդեն իսկ 28 միլիոն մարդուց: Արագորեն աճում են քաշատափորութեան վաստակները: Միայն յերկրորդ հնգամյակի տարիներում բանվորների և ծառայողների իրական աշխատավարձն աճեց ավելի քան կրկնակի: Կուլտնտեսականների մեջ աշխորերով բաշխվող դրամական յեկամուտները այդ տարիներում ավելացան 4,3 անգամ:

Ժողովրդական մասսաների բարեկեցութեան աճումը ընթանում է կուլտուրայի հսկայական աճման հետ միասին: Մեր յերկրում մտցված է ընդհանուր պարտադիր ուսուցում: Մոտ 30 միլիոն աշակերտու-

Թյուն սովորում են տարրական և միջնակարգ դպրոցում: Ուսուցման բոլոր տեսակներով ընդգրկված են 47 միլիոն մարդուց ավելի, այսինքն յերկրի ամբողջ բնակչության 1/4-ից ավելին:

Ստալինյան հնգամյակների տարիներում անչափորեն ուժեղացավ խորհրդային պետության պաշտպանության հզորությունը: ԽՍՀՄ-ը սոցիալիզմի անառիկ ամբողջն է:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում ինքնահոսի կարգով չեկավ: Հարկավոր եր ջարդել թշնամիներին համառ դիմադրությունը, վորոնք ամեն միջոցներով վործում էին կանգնեցնել սոցիալիզմի հաղթական ընթացքը: Կոմունիստական կուսակցության ղեկավարությունում, վորին գլխավորում է սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը, խորհրդային ժողովուրդը հաղթանակի ճանապարհին քիչ զգվարություններ չհաղթահարեց:

Նրա համար, վորպեսզի ստեղծել սոցիալիզմի հզոր ինդուստրիա, առաջնակարգ սոցիալիստական դյուրանտեսություն, լիկվիդացիայի յենթարկել ցարիզմից ժառանգությունն ստացած տեխնիկական և տնտեսական հետամնացությունը, ապահովել աշխատավորության համար ունեվոր և կուլտուրական կյանքի պայմաններ, խորհրդային պետությունը ծախսեց հազարն գումարներ: Ստալինյան առաջին յերկու հնգամյակների տարիներում կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսություն մեջ կազմեցին 166 միլիարդ ուրբի: Պետական և տեղական բյուջեների ծավալն այդ շրջանում կազմեց 443 միլիարդ ուրբի:

Սոցիալիստական շինարարության զգվարություններից մեկն էլ այն եր, վոր նույնիսկ այն ժամանակ, յերբ մեր յերկիրը ղեռես հարուստ չեր, մեզ վիճակվեց բացառապես կառուցել մեր սեփական միջոցներով:

Վոչ մի կապիտալիստական յերկիր չի զարգացել առանց այս կամ այն ձեվով դրսից միջոցներ ներդրավելու, իսկ ԽՍՀՄ-ը հաջողությամբ հաղթահարեց այդ զգվարությունը. մենք դսանք անհրաժեշտ միջոցներ յերկրի ներսում: Արդյունաբերության, տրանսպորտի, առեվտրի ու սոցիալիստական տնտեսության մյուս ճյուղերի կուտակումները — ահա մեր յերկրի սոցիալիզմի շինարարության Փինանսավորման հիմնական աղբյուրը:

Լենինը դրել է՝

«Յուրաքանչյուր հասարակակարգ առաջ է դալիս միայն վորոչ դասակարգի Փինանսական ոժանդակությունը»:

ԽՍՀՄ-ում սոցիալիստական կարգին Փինանսապես ոժանդակելու մյուս ձեվերի մեջ յտշոր տեղ են գրավում պետական փոխառություններն ու ինայողական դրամարկղները: Խորհրդային ինայողական դրամարկղներում ու պետական փոխառություններում գետեղված աշխատավորության դրամական միջոցները նպաստեցին սոցիալիստական շինարարության տեմպերի արագացմանը:

Սոցիալիզմի հաղթանակի հետեվանքով ԽՍՀՄ թեվակոխեց զարգացման նոր շրջան, անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցման արվարտման և սոցիալիզմից կոմունիզմին աստիճանաբար անցնելու շրջանը: Վորպեսզի իրականացնել անցումը կոմունիզմին, հարկավոր եր ձեռք բերել լրիվ, իրապես կոմունիստական առատություն, վորը կապահովի աշխատավորության բազմակողմանի պահանջների բավարարումը: Ահա թե ինչու կուսակցությունը ներկայումս առաջադրեց, վորպես հիմնական խնդիր՝ հասնել և անցնել տնտեսական տեսակետից առավել զարգացած կապիտալիստական յերկրներից, այսինքն, բնակչության յուրաքանչյուր շնչին արտա-

գրքովոյ արդյունաբերական արտադրանքի չափի տե-  
տակետից :

Այդ հիւրավի վիթխարի խնդիրներէ կատարման  
պայժմաններէց մեկը հանդիսանում է «մեր սոցիալիս-  
տական արդյունաբերութեանն ամեն կերպ ընդլայ-  
նեցնելու համար լուրջ կապիտալ ներդրումներէ դի-  
մելու պատրաստակամութեանը» (ՄՏԱԼԻՆ) :

Համկ(բ)Կ 18-րդ համադրումարի կողմից հաս-  
տատված ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսութեան զար-  
գացման յերրորդ հնգամյա պլանը խոշոր քայլ է  
հանդիսանում ընկեր Ստալինի կողմից դրված խնդրի  
իրականացման դործում, այն է մոտակա 10-15 տա-  
րիներէ ընթացքում տնտեսապես հասնել ու անցնել  
գլխավոր կապիտալիստական յերկրներէից : Կապիտալ  
ներդրումներէ չափը յերրորդ հնգամյակում, վորը  
սահմանված է 192 միլիարդ ռուբլի, ավելացվել է  
յերկրորդ հնգամյակի դիմաց 65 տոկոսով :

Կապիտալ ներդրումներէ ավելացումը, վորպես  
ԽՍՀՄ հիմնական տնտեսական խնդրի իրականացման  
ամենակարեւոր պայժման, պահանջում է մեր յերկրում  
յեղած բոլոր միջոցներէ մոբիլիզացիա, վորպեսզի  
անխափան ֆինանսավորել մեծ աշխատանքներէ պլա-  
նը :

Այդ խնդրի հաջող լուծման համար, բացի սո-  
ցիալիստական ձեռնարկութեաններէ կուտակումնե-  
րէց, պետք է լիակատար չափով ոգտադործել նաև  
կրենց աշխատավորութեան ազատ միջոցները : Այդ  
կապակցութեամբ բնակչութեան ժամանակավոր ազատ  
միջոցներէ ներգրավումը Ժողովրդական տնտեսութեան  
զարգացման կարիքներէ համար Ստալինյան յերրորդ  
հնգամյակում խոշոր կարեւորութեան է ստանում :

## 2. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Սոցիալիստական կարգի վիթխարի առաջելու-  
թեանը կայանում է նրանում, վոր ունեւոր և կուլ-  
տուրական կյանքի համար հնարավորութեաններ տրը-  
ված են բոլոր քաղաքացիներին : Մեր յերկրում աշ-  
խատանքով ստեղծված նյութական արժեքները չեն  
ծառայում բնակչութեան չնչին փոքրամասնութեան  
համար վորպես շահույթի աղբյուր, այլ նրանք գնում  
են ամբողջ Ժողովրդի բարեկեցութեան համար : Ան-  
ընդհատ աճող Ժողովրդական յեկամուտը ԽՍՀՄ-ում  
ամբողջապես պատկանում է աշխատավորութեանը :  
Դրանով է բացատրվում Խորհրդային Միութեան  
բնակչութեան ամենալայն մասսաների բարեկեցու-  
թեան անշեղ վերելքը :

Մեր յերկրի աշխատավորութեան նյութական  
զրութեան բարելավումն առաջին հերթին արտահայտ-  
վում է անդի մթերքներէ սպառման քանակութեան ա-  
վելացման մեջ : Յերկրորդ հնգամյակի տարիներում  
կովի յուղի սպառումը բանվորներէ և ծառայողներէ  
կողմից մեկ մոտ ավելացավ համարյա 2,5 անգամ,  
խոզինը — 3,5 անգամ, ցորենի հացինը՝ մոտ 3 ան-  
գամ, մրգերի և պտուղներինը — համարյա 4 անգամ :  
Սպառման աճման մեջ կոտնտեսական դրուշը հետ  
չի մնում քաղաքից : Ծաքարի չնչային սպառումը  
գյուղում յերկրորդ հնգամյակում աճեց համարյա  
6,5 անգամ, հրուշակեղինը՝ ավելի քան 3 անգամ,  
ճարպինը — ավելի քան 2 անգամ և այլն :

Ժողովրդական բարեկեցութեան բարձրացումը ա-  
ռաջ է բերում վոչ միայն անդի լավացում : Բնակչու-  
թեան սպառումներէ ըստ ամենայնի ընդլայնումը բե-

րում ե նաև նրան, վոյժբացի սննդի բարեկամումից, բացի առորջա կարիքների բավարարումից, աշխատավորութեան անհատական բյուջեներում անընդհատ ավելանում են ազատ միջոցները, վորոնք նախատեսնվում են կուլտուր-կենցաղային դործածութեան ավելի արթեքավոր առարկաներ ձեռք բերելու համար, հերթական արձակուրդը լավագույն կերպով ոգտագործելու համար և այլն:

Դրա հիման վրա առաջ ե գալիս ավանդների հսկայական աճ խորհրդային խնայողական դրամարկըններում: Հանրագումարի բերելով յերկրորդ հընդամյակի արդյունքները, ընկ. Մոլոտովը Համկ(բ)Կ 18-րդ համագումարում ասաց.

«Բնակչութեան բարեկեցութեան բարձրացման ցուցանիշներից մեկը կարող ե ծառայել այնպիսի մի փաստ, ինչպիսին ե ավանդների աճը խնայողամարկըններում՝ 1 միլիարդից մինչև 4,5 միլիարդ ուորլի»:

1938 թվին, ավանդներն ավելացան 1937 թ. համեմատութեամբ ավելի քան 1,5 միլիարդ ուորլով: Խնայողական դրամարկընների ավանդատուների քանակը 1930 թ. սկզբին հասավ 16 միլիոնի\*): Ավանդատուների քանակն ու ավանդների դումարը շարունակում են աճել:

Կապիտալիստական յերկրներում միայն բնակչութեան սահմանափակ մասը կարող ե ունենալ խնայողութեան: Բուրժուական մի քանի պետութեաններում աշխատավորութեան առանձին կատեգորիաների համար սահմանված ե հարկադիր խնայողութեանների սխտեմ: Սակայն նույնիսկ այնտեղ, վորտեղ աշխատավորութեան մոտ կան կամուկին կուտակված մանր խնայողութեաններ, ըստ եյուլթեան նրանք դարձյալ ստիպողական ընտելթ են կրում: Աշխատավորութեան ավանդները կապիտալիստական դրամարկըններում ամենեկին չեն հանդիսանում նյութական առատութեան հատկանիշ: Նրանք խիստ խնայողութեան արդյունք են, նրանք հետեանք են ամենամանհրաժեշտ պահանջների բավարարման գործում արված դաժան սահմանափակման, վորոնք թելադրվում են դեպի ապագան ունենալիք անվտանգութեամբ, անխուսափելի «սեմ որվա» առաջ կանդնելու ճնշող վախով:

\*) Առ 21/1 40 թ. ավանդատուների քանակը հասնում ե 16.800 հազարի, իսկ ավանդի մնացորդը՝ 7051,7 միլիոն ուորլու. (Մանոթ. խմբ.):

Աշխատավորութեան ավանդները կապիտալիստական յերկրներում ամենամարկըններում հանդիսանում են յուրահատուկ ապահովագրման Ֆոնդ՝ կազմված ի հաշիվ սպառման կրճատման և նախատեսնված են ապահովելու համար իրեն թեկուզ ամենահամեատ խնայողութեաններով դործագրկութեան, հիվանդութեան, ծերութեան դեպքերում:

Խորհրդային Միութեան մեջ վերջնականապես վոչնչացված ե դործագրկութեանը: Ստալինայան Մահամանդրութեանը յերաշխովորում ե յուրաքանչյուր քաղաքացուն աշխատանքի իրավունք: ԽՍՀՄ աշխատավորները պետութեան կողմից ապահովվում են նույնպես աշխատունակութեանը ժամանակավորապես կամ մշտապես կորցնելու դեպքում: Սոցիալիզմի հաղթանակը մեր յեկրում, վորը ամրացված ե ԽՍՀՄ հիմնական որենքում, ընդամիշտ լիկվիդացիայի յենթարկեց «սեմ որվա» սպառնալիքը խորհրդային քաղաքացիների համար:

Խնայողութեաններն ստեղծման կարելիորադոյն շարժառիթը խորհուրդների յերկրում աշխատավորութեան ձգտումն ե ել ավելի ունեւոր, ել ավելի կուլտուրական կյանք ստեղծելու համար: Այդ ձգտումը լայնացնում ե պահանջները, բարձրացնում ե բնակչությանը:

Խնայողութեաններն ստեղծման կարելիորադոյն շարժառիթը խորհուրդների յերկրում աշխատավորութեան ձգտումն ե ել ավելի ունեւոր, ել ավելի կուլտուրական կյանք ստեղծելու համար: Այդ ձգտումը լայնացնում ե պահանջները, բարձրացնում ե բնակչությանը:

չության պահանջները<sup>1</sup> և դրդում ե ստեղծել խնայողութուններ հարաճուն աճող կարիքներն ու պահանջները բավարարելու համար: Հետեւաբար աշխատավորության նյութական և կուլտուրական կյանքի մակարդակի բարձրացմամբ անչեղորեն կաճեն և խլենայողութունները, վտորոնք մեղ մոտ՝ ԽՍՀՄ-ում ժողովրդական բարեկեցության հատկանիշն են հանդիսանում:

Խորհրդային քաղաքացիները խնայողութուններն առավելապես նպատակային բնույթ ունեն. նրանք նախորդչիված են այս կամ այն կուլտուր-կենցաղային պահանջները բավարարելու համար: Խնայողական սխտեմը կոչված է բնակչության խնայողութունները պահելու համար: Նա ոժանդակում է պահելու խնայողութունները այն նպատակի համար, ինչի համար վոր նրանք նախատեսում են:

Բացի այդ, խնայողական դրամարկղը նպաստում է դրամ կուտակելու այնպիսի ծախսումների համար, վորոնք առորջա բնույթ չեն կրում և կարող են կատարվել միայն աստիճանական կուտակումների հետեւանքով: Դրանում արտահայտվում է խնայողական դրամարկղների կազմակերպիչ ազդեցութունը աշխատավորության անհատական բյուջեյի վրա:

Բնակչության խնայողութուններն ի պահ ընդունելով, խնայողական դրամարկղները տեղավորում են այն պետական հատուկ փոխառության մեջ և այդ հանապարհով բյուջեյի միջոցով ուղղում են նրանք սոցիալիստական շինարարության ֆինանսավորմանը: Խնայողական դրամարկղներում դրամները պահող խորհրդային քաղաքացիներն այդպիսով նպաստում են սոցիալիստական հայրենիքի ֆինանսական հզորության ամրացմանը:

### 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1939 թ. սկզբին Խորհրդային Միության տերիտորիայում հաշվվում էր 26 հազար խնայողական դրամարկղներ<sup>\*</sup>): Ամեն մի քաղաքում, գյուղերի մեծամասնութունում կան խնայողական դրամարկղներ: Վերջին ժամանակներս խնայողական դրամարկղների ցանցը լայնացվում է հատկապես գյուղական վայրերում, վորն էլ ավելի կմոտեցնի նրան՝ բնակչությանը:

Խնայողական դրամարկղը ի պահ մուծած դրամները կոչվում են ավանդներ: Դրամն առաջին անգամ մուծելիս խնայողական դրամարկղը տալիս է խնայողական գրքույկ, նրա մեջ հետագայում գրանցելով հաջորդ մուծումներն ու վճարումները: Այդ անձնավորութունը, վորի անունով է տրված խնայողական գրքույկը, կոչվում է ավանդատու:

Խնայողական դրամարկղում դրամներ պահելը շահավետ է ինչպես իրենց, ավանդատուներին, այնպես էլ ամբողջ խորհրդային պետությանը: Դրանից յեղնելով, պետութունը, խնայողական դրամարկղներում առավելապես ավանդներ ներգրավելու նպատակով, ավանդատուներին մի շարք առավելութուններ է տալիս:

Խնայողական դրամարկղը մուծած դրամները լիակատար անվճարութունը, ավանդատուներին յե-

<sup>\*</sup>) Աս 1/ 1940 թ. տվյալներով խնայողական դրամարկղների քանակը հասնում է 37.120-ի. (Մանոթ, իմբ.):

բաշխավորում է ԽՍՀ Միության կառավարութիւնը: Բոլոր պարագաներում (հրդեհի, խնայողական դրամարկղը կողոպտելու դեպքում և այլն) ավանդատուները լրիվ չափով պահպանում են իրենց իրավունքներն ավանդների վրա:

Խնայողական գրքույկի կորուստը նույնպես չի զրկում ավանդատույին իրեն ավանդը ստանալու իրավունքից: Նա միայն պիտի ժամանակին այդ մասին հայտնի խնայողական դրամարկղին. կորցրածի կամ գողացվածի փոխարեն նրան տրվում է նոր խնայողական գրքույկ:

Խնայողական դրամարկղում դրամներ պահելը— խնայողութիւնները պահելու ամենաապահով միջոցն է:

Խնայողական դրամարկղները պահպանում են ավանդների գաղտնիքը: Այդ նշանակում է, վոր վոչ մի տեղեկանք ավանդատուների և նրանց ավանդները մասին դրամարկղը չի տալիս: Բացառութիւն թույլատրվում է միայն քննչական և դատական մարմինների համար, նրանց գրավոր պահանջներով՝ կապված միայն քրեյական գործերի հետ, խնայողական դրամարկղները պարտավոր են տեղեկութիւններ հայտնել ավանդատուների ու նրանց ավանդների մասին (քաղաքացիական գործերով այդ տեղեկանքները չեն հաղորդվում):

Ավանդատուների և նրանց ավանդների մասին տեղեկութիւններ հրապարակելու համար խնայողական դրամարկղների աշխատակիցները քրեյական պատասխանատվութիւն են յենթարկվում: Ավանդները խնայողական դրամարկղներում անձեռնմխելի յեն: Նրանք առանց ավանդատույի համաձայնութիւն չեն կարող գործադրվել նրա վորեւի մի պարտավորութիւն մարման համար:

Ավանդների վրա նույնպես չի կարող կարանք դրվել ավանդատույի հանդէպ հարուցված քաղաքացիական դեպքերի կապակցութեամբ: Միայն այն դեպքում, յերբ ավանդատուի հանդէպ քրեյական գործ է հարուցված, քննչական ու դատական մարմինների պահանջով թույլատրվում է նրա ավանդի վրա կանք դնել:

Բռնագանձումն ավանդի վրա գործադրվում է միայն քրեյական գործով հանված դատավճոխի հիման վրա:

Խնայողական դրամարկղների ավանդատուներն ավանդներով յեկամուտ են ստանում տարեկան 3 տոկոսի չափով: Տոկոսներն ավանդի գումարին բարդվում են յուրաքանչյուր տարվա վերջին: Ամբողջ ավանդն ստանալիս, ավանդատույին վճարվում են նույնպես հասանելիք տոկոսները:

Ավանդատուներին բարդված կամ վճարված տոկոսների ընդհանուր գումարը յերրորդ հնգամյակի տարիներում կաղմել է մոտ 600 միլիոն ուրբլի: 1938 թիւն ավանդատուներն ավանդով տոկոսներ են ստացել ավելի քան 150 միլիոն ուրբլի\*):

1939 թ. յեկամտարեթիւնը ավանդներով ել ավելի յե աճում ժամկետային ավանդներ մտցնելու կապակցութեամբ: Այդ ավանդներով, այսինքն վոչ պակաս քան վեց ամսվա ժամկետով մուծած ավանդներով, խնայողական դրամարկղները յեկամուտ են վճարում տարեկան վոչ թե 3, այլ 5 տոկոսի հաշվով: Իր խնայողութիւնները ժամկետային ավանդ մուծող ավանդատուն կարող է հետ ստանալ միլիլե վեցամսյա ժամկետի յրանայր:

Այդ դեպքում նա անցած ժամանակվա համար ստանալու յե յեկամուտ միայն 3 տոկոսի հաշվով, յինչպես սովորական ավանդով:

\*) 1939 թ. ավանդատուներն ավանդով տոկոսներ են ստացել ավելի քան 190 միլիոն ուրբլի (Մանութ. խմբ.):

Ժամկետային ավանդ մուծողների վրա տարած-  
վում են բոլոր այն արտոնություններն ու առավե-  
լությունները, ինչ վոր սահմանված են խնայողական  
դրամարկղների ավանդատուների համար:

Ավանդները խնայողական դրամարկղները մուծ-  
վում են լրիվ կամավորության հիման վրա: Խնայող-  
ական դրամարկղի ավանդատուներ կարող են լինել  
բոլոր քաղաքացիները:

Ամեն մի քաղաքացի միաժամանակ կարող է մի  
քանի խնայողական դրամարկղների ավանդատու դառ-  
նալ կամ մուծել դրամը միեւնուեւն դրամարկղում մի  
քանի խնայողական դրքույկներում: Ավանդը թույլա-  
տրվում է մուծել ինչպես իրեն անուշով, այնպես էլ  
ուրիշ անձնավորությունների անուշով: Խնայողական  
դրամարկղներն ավանդներ են ընդունում նաև անչա-  
փահասների անուշով: Վոչ մի սահմանափակում ա-  
վանդների չափի մասին չի սահմանված: Միայն խնայող-  
ական դրամարկղը մուծած առաջին մուծումը,  
ինչպես և ավանդի մնացորդը պետք է 5 ուրբուց  
պակաս չլինի: Մյուս պատճառով ավանդը ստանալիս,  
յեթե ավանդատուն ցանկանում է սրահել խնայողա-  
կան դրքույկը, նա պետք է իր հաշվում թողնի վոչ  
պակաս 5 ուրբի:

Լրացուցիչ մուծումներ կարելի չեն մուծել վոչ  
միայն այն խնայողական դրամարկղը, վորը խնայող-  
ական դրքույկ է տվել, այլ և ցանկացած ուրիշ  
դրամարկղ:

Ավանդատուն իրավունք ունի ցանկացած ժամա-  
նակ իր ավանդն ստանալ մասամբ կամ ամբողջապես  
տոկոսների հետ միասին: Ավանդատույի պահանջով  
ավանդի տալը խնայողական դրամարկղը կատարում է  
անմիջապես: Ավանդի տալը ձգձգող մեղավորները  
յենթարկվում են դատական պատասխանատվության:  
Ավանդները ստանալու համար վոչ մի վերջնական  
ժամկետ գոյություն չունի:

Ավանդի միակ կարգադրողը հանդիսանում է ին-  
քը՝ ավանդատուն: Յեթե ավանդը վորևէ մեկի կող-  
մից մուծվել է մեկ ուրիշի անուշով, այդ դեպքում  
ավանդատուն հանդիսանում է վերջինս, և միայն նա  
իրավունք ունի ավանդն ստանալու, իսկ ավանդ մու-  
ծողն ալլևս չի կարող կարգադրություն անել նրա  
վրա: Ավանդների վրա կարգադրություն անելու հա-  
տուկ կարգ է սահմանված անչափահասների համար:  
Յեթե անչափահասն ինքն է ավանդը մուծել իր անու-  
շով, ապա նա, ընդհանուր հիմունքներով, ինքնու-  
րույն կարգադրություն է անում այդ ավանդների  
վրա:

Իսկ այն ավանդները, վորոնք ուրիշ անձնավո-  
րությունների կողմից մուծվել են անչափահասների  
անուշով, մինչև ավանդատուի 14 տարեկան հասակը  
լրանալու մոմենտը տրվում են նրա ծնողներին կամ  
խնամակալներին, իսկ 14 տարին լրանալուց հետո և  
մինչև ավանդատույի չափահաս դառնալը տրվում են  
նրան, սակայն ծնողների կամ խնամակալների համա-  
ձայնությամբ, իսկ չափահաս դառնալուց հետո և-  
վանդատուն դառնում է ավանդի լիակատար կարգա-  
դրողը:

Ստորին խնայողական դրամարկղների ավանդա-  
տուներին հնարավորություն է տրվում ավանդը ստա-  
նալ ինչպես այն դրամարկղից, վորտեղ մուծել է ա-  
վանդը, այնպես էլ կենտրոնական կամ շրջանային  
խնայողական դրամարկղում, վորին յենթակա չեն  
տվյալ ստորին դրամարկղը:

Ավանդն ստանալիս բոլոր դեպքերում անհրաժեշտ  
է ներկայացնել խնայողական դրքույկը:

Ավանդատուն կարող է իր ավանդի ստանալը  
վստահել ուրիշ անձնավորությունների: Նա կարող է  
հավատարմագիր տալ կամ մեկ անգամ վորոշ գումար  
ստանալու, կամ թե մշտապես դրամ ստանալու հա-  
մար, այսինքն հանձնարարել հավատարմատար անձին

3096  
40



կամ մի քանի անձնավորութիւնները վորոչ ժամանակա-  
կարծութեամբ կարգադրութիւն անել ավանդի վրա:  
Գործող որեւորով ամեն մի հավատարմաբար  
պետք է վավերացվի նոտարական մարմնի կողմից:  
Սակայն խնայողական դրամարկղներէից ավանդը ստա-  
նալու հավատարմագրերի համար բացառութիւն է  
թույլատրվում նրանք կարելի յէ չհաստատել նոտա-  
րական մարմիններում:

Մշտապէս դրամ ստանալու հավատարմագիրը  
կարող է ավանդատուցի կողմից գրվել կամ խնայողա-  
կան դրամարկղում դրամով նրա անձնական հաշվում,  
կամ ել թղթի առանձին թերթի վրա:

Առաջին դեպքում ավանդատուցի ստորագրութիւնը  
հավատարմագրի վրա վավերացնում է խնայողական  
դրամարկղի վերահսկիչը: Ավանդի վրա կարգադրու-  
թիւն անելու հավատարմագիրը, կազմված թղթի ա-  
ռանձին թերթի վրա, պետք է վավերացվի ավանդա-  
տուցի աշխատանքի վայրի կամ բնակութեան վայրի  
հիմնարկութեան կամ կազմակերպութեան կողմից:  
Այդ նույն հիմնարկութիւնները կամ կազմակերպու-  
թիւններն իրավունք ունեն վավերացնել միանվագ  
հավատարմագրերը, վորոնք տրված են 500 ուրբուց  
ավելի գումարով ավանդ ստանալու համար: Իսկ իւր-  
նայողական գրքուկով 500 ուրբուց պակաս գումար  
ստանալու համար տրված միանվագ հավատարմագիրը  
վոչ մի տեղ հարկավոր չի վավերացնել: Այդպիսով  
ավանդն ստանալու համար հավատարմագրեր տալու  
կարգը վոչ մի բարդ ձեւակառութիւններ չի պահան-  
ջում:

Ավանդատուն կարող է իր ավանդը կտակել ում  
ցանկանում է: Ավանդը կտակելու համար ևս, ինչպէս  
հավատարմագրեր տալու վերաբերյալ սահմանված է  
մի շարք արտոնութիւններ, գույքը կտակելու գոր-  
ծող կարգի համեմատութեամբ:

Ամենից առաջ ավանդատուներին իրավունք է վե-

րապահվում ավանդը կտակել վոչ միայն իրենց որե-  
նական ժառանգներին, այլ և ցանկացած անձնավո-  
րութիւններին և կազմակերպութիւններին: Ավանդի  
կտակումը ձեւակերպվում է պարզացված կարգով:  
Ավանդատուն գրանցում է կտակային կարգադրու-  
թիւնը կամ անձնական հաշիւ վրա խնայողական  
դրամարկղում, իսկ դրամարկղի վերահսկիչն անմիջա-  
պէս տեղն ու տեղը վավերացնում է այն, կամ հենց  
խնայողական գրքուկի վրա, կամ ել թղթի առանձին  
թերթի վրա: Վերջին դեպքում կտակային կարգա-  
դրութիւնը պետք է վավերացվի ավանդատուցի  
աշխատանքի կամ բնակութեան վայրի հիմնար-  
կութեան կամ կազմակերպութեան կողմից (բայց վոչ  
տնային վարչութեան, այլ ուսումնական, քաղաքային  
կամ դուրդական խորհրդի կողմից): Ավանդատուն ի-  
րավունք ունի ցանկացած ժամանակ վերացնել իրեն  
կտակային կարգադրութիւնը: Այն ավանդը, վորով  
կտակային կարգադրութիւն արված չի յեղել, ավան-  
դատուցի մահից հետո տրվում է նրա որինական ժա-  
ռանգներին:

Գոյութիւն ունեն ավանդների մի քանի տեսակ-  
ներ. ամեն մի ավանդատու կարող է ընտրել իրեն  
համար առավել հարմար տեսակը:

Այսպէս, բացի անվանական ավանդներից, այ-  
սինքն վորոչ անձնավորութեան անունով մուծված,  
խնայողական դրամարկղներն ընդունում են ներկա-  
յացուցչական ավանդներ: Այդ դեպքում դրամարկղին  
չի հետաքրքրում ավանդատուցի ազդանունը, անունն  
ու հայրանունը, վորովհետեւ խնայողական գրքուկի  
վրա ցույց է տրվում «ներկայացուցչական»: Ամեն մի  
անձնավորութեան, վորը ներկայացնում է այդպիսի  
խնայողական գրքուկի նրան կցվող հատուկ հսկիչ  
թերթով, տրվում է ավանդը:

Այդպիսի ճանապարհով կարելի յէ առանց հավա-  
տարմագիր կազմելու, ավանդի ստանալը հանձնարարել

ուրիշ անձնավորութեան: Ներկայացուցչական խնայողական գրքույկը կորցնելիս, ավանդի վրա իրավունքը կարելի չէ վերականգնել միայն դատարանի վորոշմամբ, յետք մինչև այդ ավանդը խնայողամարկը կողմից չի տրվի նրան, ով կներկայացնի խնայողական գրքույկը նրան կից հսկիչ թերթով:

Սովորական անվանական ավանդների կողքին դոյություն ունեն պայմանական ավանդներ: Այդպիսի ավանդ մուծող անձնավորութեանը հիշատակում է պայմանը, ըստ վորի խնայողական գրամարկը պետք է տա ավանդը: Այսպես, որինակ, ավանդը տարու պայման կարելի չէ դնել ավանդատույի կողմից ուսումնական հաստատութեան ավարտելը, նրա վորոշ տարիքի հասնելը և այլն:

Ավանդատույի և ավանդը մուծող անձնավորութեան համաձայնութեամբ պայմանը կարելի չէ վերացնել:

Դրամը խնայողական գրամարկը կարելի չէ մուծել և ընթացիք հաշվով: Ընթացիք հաշվով տարբերվում է գլխավորապես նրանով, վոր ավանդատույին խնայողական գրքույկի փոխարեն տրվում է հաշվարկային և չեկային գրքույկներ: Հաշվեգրքույկում խնայողական գրամարկը գրանցում է միայն մուծումները: Դրամի տարբեր կատարվում է ավանդատույի կողմից լրացված և ստորագրված չեկերով: Յետք չեկը ներկայացուցչական է, այդ դեպքում խնայողական գրամարկը գրամն ընթացիք հաշվով տարիս է չեկը ներկայացնող ամեն մի անձնավորութեան: Ընթացիք հաշվի հարմարութեանը կայանում է նրանում, վոր գրամի ստացումը հանձնարարելով ուրիշ անձնավորութեան, բավական է միայն նրան տալ լրացված և ստորագրված չեկ: Իսկ սովորական ավանդով ավանդատուն այդ դեպքում պետք է հավատարմագիր կազմի և նրա հետ միասին հավատարմա-

տարի անձին տա իր խնայողական գրքույկը, առանց վորի դրամը չի կարող տրվել:

Խնայողական գրամարկըն ավանդատույի հայտարարութեամբ փոխադրում է նրա ավանդը ուրիշ գրամարկ: Ավանդները կարող են փոխադրվել հետագա պահպանման համար խնայողական գրամարկը կամ կանխիկ դրամով վճարելու համար:

Ավանդատուն կարող է ավանդը ուրիշ խնայողական գրամարկի փոխադրել վոչ միայն իրեն անունով, այլ և ուրիշ անձնավորութեաններին անունով: Բացի այդ, խնայողական գրամարկըներն ընդունում են փոխադրելու համար ուրիշ գրամարկըներ կանխիկ դրամ, սակայն այն պայմանով միայն, յետք նրանք փոխադրվում են ավանդում հաշվեգրքույկ համար: Այսպիսով, փոխադրումներով կարելի չէ ոգտվել ինչպես ավանդատույի մեկ ուրիշ վայր սեղափոխվելիս, այնպես և դրամական հաշվարկումներ անելու համար այն անձնավորութեանների հետ, վորոնք ապրում են ուրիշ սեղերում: Ավանդը փոխադրելու մասին հայտարարութեանը կարելի չէ տալ վոչ միայն այն խնայողական գրամարկին, վորը տվել է խնայողական գրքույկը, այլ և ցանկացած ուրիշ խնայողական գրամարկին: Ավանդի փոխադրման համար խնայողական գրամարկըները վճար են դանձում այն նույն չափով, ինչպես դրամը փոստով փոխադրելիս: Փոխադրութեան ճանապարհին յեղած ժամանակամիջոցին ավանդատույի ավանդի վրա բարդվում են նրա տոկոսները:

Խնայողական գրամարկըների ավանդատույներն ողտվում են դարձյալ մեկ առավելութեանով. նրանց հնարավորութեան է տրված բնակարանի և կոմունալ սպասարկումների համար (եղբարականութեան, դադ, հեռախոս և այլն) վճարումներ կատարել անկանխիկ հաշվարկումների միջոցով: Հաշվարկումների այդպիսի կարգն ազատում է համապատասխան հիմնարկու-

Թյուններին անձնացես ներկայանալուց հասանելի գումարները վճարելու համար: Իրա փոխարեն ավանդատուն, վճարման մասին ծանուցումը ստանալով, ուղարկում է այն փոստով (առանց մարկաներ փակցնելու) իրեն խնայողական դրամարկղին, նախապես լրացնելով ծանուցման մյուս յերեսին տպագրված հրամանը խնայողական դրամարկղին վճարման գումարը ավանդից դուրս դրելու մասին: Ծանուցումը ստանալիս խնայողական դրամարկղը կատարում է ավանդատույի հրամանը: Դուրս գրելով վճարման գումարը, նա դրամը փոխանցում է ըստ պատկանելույն և ավանդատույին և ուղարկում անդորրադրերը: Այդպիսով, առանց վորևե նեղության ավանդատուն կարող է բնակարանի կամ կոմունալ սպասարկումների համար դրամը վճարել:

Անկանխիկ հաշվարկումներով ավանդատուների հանձնարարությունները խնայողական դրամարկղների կողմից ձբի յեն կատարվում:

Ամեն մի քաղաքացի, անկախ նրանից, ավանդատու յե հանդիսանում թե վոչ, կարող է դրամը մուծել խնայողական դրամարկղը և ստանալ ակկրեդիտիվ: Ակկրեդիտիվ ունենալով, դրամը կարելի յե ստանալ ՍՍՀՄ ամեն մի խնայողական դրամարկղից (քացի գործակալություններից): Ահա թե ինչու գործուղում, կուրորտ, եքսկուրսիա և այլն գնալիս հարմար է կանխիկ դրամի փոխարեն հետը վերցնել ակկրեդիտիվ:

Ոչոր աշխատանք են կատարում խնայողական դրամարկղները խորհրդային պետական փոխառությունների պարտատոմս պահողների սպասարկման գործում: Նրանք քաղաքացիներից պարտատոմսեր են ի պահ ընդունում: Ի պահ ընդունած պարտատոմսերը խնայողական դրամարկղները ստուգում են շահումների աղյուսակներով և ընկած շահումների մասին

հայտնում են պարտատոմսատերերին: Պարտատոմս պահողը կարող է այդպիսիք պահել նաև իրեն մոտ և հանձնարարել խնայողական դրամարկղին ստուգելու պարտատոմսերի համարները շահումների աղյուսակներով: Իրա համար անհրաժեշտ է խնայողական դրամարկղում ձեռք բերել շահումները ստուգող բյուրոյի քարտեր (քարտերի արժեքն է 5 կոպ.), ամեն մի քարտում ցույց տալ պարտատոմսի համարն ու իրեն հասցեն և հանձնել քարտերը ցանկացած խնայողական դրամարկղին: Ընկած շահումների մասին կհայտնվի պարտատոմս պահողին:

Մնայողական դրամարկղները վճարում են շահումները, կուպոններն ու մարման խաղարկություններով դուրս յեկած պարտատոմսերը, նաև գնում և վաճառում են 1938 թ. պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերը:

\* \* \*

Իրենց դրամները խնայողական դրամարկղներում պահելով, աշխատավորները լրացուցիչ միջոցներ են տալիս պետությանը՝ սոցիալիստական շինարարությունը Փինանսավորելու համար: Ներգրաված միջոցները պետությունն ոգտագործում է հոգուտ աշխատավորության շահերի: Իրանում է արտահայտվում պետության և ժողովրդի շահերի միասնությունը, վորն իր նմանը չունի պատմության մեջ և վորը խորհրդային խնայողական դրամարկղների հետագա զարգացման դրավականն է հանդիսանում:

« Ազգային գրադարան



NL0197752



Պատ. խմբագիր՝ Ա. ԿԱՍՊԱՐՅԱՆ  
 Թարգմանիչ Մ. Հարությունյան  
 Տեխ. խմբագիր և սրբագրիչ Վ. Խաչատրյան

Գլխավոր լրագր Ա.—2458, պատվեր 451, տիրաժ 5000

---

Հայկական ԽՍՀ ԺԿՆ-ին կից Թերթերի և ամսագրերի  
 տպարան, Յերևան